ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՊՎԾ-ՄԱԾՁԲ-19/12

ք. Երևան «20» հոկտեմբեր 2019թ.

Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Անի Բաղդասարյանի, որը գործում է Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության (այսուհետ՝ ծառայություն) կանոնադրության հիման վրա, այսուհետ «Պատվիրատու», մի կողմից, և «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ն ի դեմս տնօրենի ժ/պ Վարդան Պետրոսյանի, որը գործում է «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա այսուհետ «Կատարող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է փորձաքննության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 (երկու) օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 564,000 (հինգ հարյուր վաթսունչորս հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի.իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ,

որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայություն	«ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Մաշտոցի 47	ք. Երևան, Արշակունյաց պ., 23
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 90011021954	Հ/Հ 900018003146
ՀՎՀՀ 00183253	ՀՎՀՀ 02512069
Գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝	Տնօրենի ժ/պ՝
---------- Ա. Բաղդասարյան /ստորագրություն/	---------- Ա. Գևորգյան /ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«20» Էպրիլ 2019 թ. կնքված
«ՊՎԾ-ՄԱԾՁԲ-19/12» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

	Ծառայության						Մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	Միավոր ծառայությունների գինը	ընդհանուր գինը/ ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը**
1.	50531140/3	1.Երեսամասի կտորի քաշը 1մ/ք հաշվարկով 2.Երեսացու կտորի բաղադրությունը տոկոսային հարաբերակցությամբ /բամբակ, բուրդ, վիսկոզա /շոլկ/, պոլիէսթեր, նեյլոն/	հատ	37600		1	Ք. Երևան, Մաշտոց 47	IV եռամսյակ
2.		1.Երեսամասի կտորի քաշը 1մ/ք հաշվարկով 2.Երեսացու կտորի բաղադրությունը տոկոսային հարաբերակցությամբ /բամբակ, բուրդ, վիսկոզա /շոլկ/, պոլիէսթեր, նեյլոն/ 3.երեսամասի կտորի ծածկույթի բնորոշում /ջրայուղաանրադարձող կամ այլ/ 4.թևքանշանի տեսակը /ջակարդ/գործվածք/, տպագրություն կամ այլ/	լրակազմ	37600		1		
3.		1.Երեսամասի կտորի քաշը 1մ/ք հաշվարկով 2.Երեսացու կտորի բաղադրությունը տոկոսային հարաբերակցությամբ /բամբակ, բուրդ, վիսկոզա /շոլկ/, պոլիէսթեր, նեյլոն/ 3.երեսամասի կտորի ծածկույթի բնորոշում /ջրայուղաանրադարձող կամ այլ/ 4.թևքանշանի տեսակը /ջակարդ/գործվածք/, տպագրություն կամ այլ/	լրակազմ	37600		1		
4.		1.Երեսամասի կտորի քաշը 1մ/ք հաշվարկով 2.Երեսացու կտորի բաղադրությունը տոկոսային հարաբերակցությամբ /բամբակ, բուրդ, վիսկոզա /շոլկ/, պոլիէսթեր, նեյլոն/	հատ	37600		1		
5.		1.Երեսամասի կտորի քաշը 1մ/ք հաշվարկով 2.Երեսացու կտորի բաղադրությունը տոկոսային հարաբերակցությամբ /բամբակ, բուրդ, վիսկոզա /շոլկ/,	հատ	37600		1		

		պոլիէսթեր, նեյլոն/						
6.		1.Երեսամասի կտորի քաշը 1մ/ք հաշվարկով 2.Երեսացու կտորի բաղադրությունը տոկոսային հարաբերակցությամբ /բամբակ, բուրդ, վիսկոզա /շոլկ/, պոլիէսթեր, նեյլոն/	լրակազմ	37600		1		
7.		1.Երեսամասի կտորի քաշը 1մ/ք հաշվարկով 2.Երեսացու կտորի բաղադրությունը տոկոսային հարաբերակցությամբ /բամբակ, բուրդ, վիսկոզա /շոլկ/, պոլիէսթեր, նեյլոն/	լրակազմ	37600		1		
8.		1.Երեսամասի կտորի քաշը 1մ/ք հաշվարկով 2.Երեսացու կտորի բաղադրությունը տոկոսային հարաբերակցությամբ /բամբակ, բուրդ, վիսկոզա /շոլկ/, պոլիէսթեր, նեյլոն/	լրակազմ	37600		1		
9.		1.Երեսամասի կտորի քաշը 1մ/ք հաշվարկով 2.Երեսացու կտորի բաղադրությունը տոկոսային հարաբերակցությամբ /բամբակ, բուրդ, վիսկոզա /շոլկ/, պոլիէսթեր, նեյլոն/	լրակազմ	37600		1		
10.		1.Երեսամասի կտորի քաշը 1մ/ք հաշվարկով 2.Երեսացու կտորի բաղադրությունը տոկոսային հարաբերակցությամբ /բամբակ, բուրդ, վիսկոզա /շոլկ/, պոլիէսթեր, նեյլոն/ 3.գրպանների կափյուրները և օձիքը կրկնակարված են սոսնձվող կտորով, թե ոչ՝ միաժամանակ վուշ-բրդյա քաթանով	լրակազմ	37600		1		
11.		1.Երեսամասի կտորի քաշը 1մ/ք հաշվարկով 2.Երեսացու կտորի բաղադրությունը տոկոսային հարաբերակցությամբ /բամբակ, բուրդ, վիսկոզա /շոլկ/, պոլիէսթեր, նեյլոն/	հատ	37600		1		
12.		1.Երեսամասի կտորի քաշը 1մ/ք հաշվարկով 2.Երեսացու կտորի բաղադրությունը տոկոսային հարաբերակցությամբ /բամբակ, բուրդ, վիսկոզա /շոլկ/, պոլիէսթեր, նեյլոն/ 3.երեսամասի կտորի ծածկույթի բնորոշում /ջրայուղաանրադարձող կամ այլ/ 4.երեսամասի կտորի ներսի կողմի ծածկույթը /մեմբրան կամ այլ նյութ/ 5.ներդիրի սինտեպոնի առկայություն՝	հատ	37600		1		

		մակերեսային խտությունը						
13.		1.Երեսամասի կտորի քաշը 1մ/ք հաշվարկով 2.Երեսացու կտորի բաղադրությունը տոկոսային հարաբերակցությամբ /բամբակ, բուրդ, վիսկոզա /շոլկ/, պոլիէսթեր, նեյլոն/ 3.երեսամասի կտորի ծածկույթի բնորոշում /ջրայուղաանրադարձող կամ այլ/ 4.երեսամասի կտորի ներսի կողմի ծածկույթը /մեմբրան կամ այլ նյութ/ 5.ներդիրի սինտեպոնի առկայություն՝ առկայության դեպքում սինտեպոնի մակերեսային խտությունը 6. թևքանշանի տեսակը /ջակարդ/գործվածք/, տպագրություն կամ այլ/ 7.օձիքի մորթու տեսակը՝ բնական կամ արհեստական 8.օձիքի մորթու մակերեսային խտությունը 1ք/մ հաշվարկով և խավի նվազագույն բարձրությունը	հատ	37600		1		
14.		1.Երեսամասի կտորի քաշը 1մ/ք հաշվարկով 2.Երեսացու կտորի բաղադրությունը տոկոսային հարաբերակցությամբ /բամբակ, բուրդ, վիսկոզա /շոլկ/, պոլիէսթեր, նեյլոն/	հատ	37600		1		
15.		1.Երեսամասի կտորի քաշը 1մ/ք հաշվարկով 2.Երեսացու կտորի բաղադրությունը տոկոսային հարաբերակցությամբ /բամբակ, բուրդ, վիսկոզա /շոլկ/, պոլիէսթեր, նեյլոն/	հատ	37600		1		

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի Հանրապետության պետական
վերահսկողական ծառայություն
ք. Երևան, Մաշտոցի 47
Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 90011021954
ՀՎՀՀ 00183253

Գլխավոր քարտուղարի
պաշտոնակատար

---------- Ա. Բաղդասարյան
/ստորագրություն/

ԿԱՏԱՐՈՂ

«Հայաստանի Հանրապետության
փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Արշակունյաց պ., 23
Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900018003146
ՀՎՀՀ 02512069
Տնօրենի ժ/պ՝

---------- Կ.Պետրոսյան
/ստորագրություն/

Հավելված N 2
«20» Հունվ 2019թ. կնքված
«ՊՎԾ-ՄԱԾՁԲ-19/12» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հազ ՀՀ դրամ

հերթական համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50531140/3	Գլխարկ ձմեռային ականջակալներով											37600	37600	**37600**
2		Կոստյում /բաճկոն-տաբատ գունաքողարկող կեպիով/											37600	37600	**37600**
3	50531140/3	Կոստյում /բաճկոն-տաբատ կիսաբամբակյա կեպիով/											37600	37600	**37600**
4		Վերնաշապիկ կ/թ											37600	37600	**37600**
5	50531140/3	Վերնաշապիկ ե/թ											37600	37600	**37600**
6		Կոստյում /բաճկոն-տաբատ գունաքողարկող կեպիով/											37600	37600	**37600**
7	50531140/3	Կոստյում /բաճկոն-տաբատ կիսաբամբակյա կեպիով/ ՈՉ											37600	37600	**37600**

8		Կոստյում /բաճկոն-տաբատ կիսաբամբակյա կեպիով/											37600	37600	**37600**
9	50531140/3	Կոստյում /բաճկոն-տաբատ կիսաբրդյա/											37600	37600	**37600**
10		Կոստյում /տարազաբաճկոն-տաբատ կիսաբրդյա, ամենօրյա/											37600	37600	**37600**
11	50531140/3	Կիսավերարկու ՈՌ											37600	37600	**37600**
12		Կիսավերարկու											37600	37600	**37600**
13	50531140/3	Կիսավերարկու ՃՈ											37600	37600	**37600**
14		Կիսավերարկու											37600	37600	**37600**
15	50531140/3	Կիսավերարկու											37600	37600	**37600**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի Հանրապետության պետական
վերահսկողական ծառայություն
ք. Երևան, Մաշտոցի 47
Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 90011021954
ՀՎՀՀ 00183253

Գլխավոր քարտուղարի
պաշտոնակատար՝

---------- Ա. Բաղդասարյան
/ստորագրություն/

ԿԱՏԱՐՈՂ

«Հայաստանի Հանրապետության
փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Արշակունյաց պ., 23
Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900018003146
ՀՎՀՀ 02512069
Տնօրենի ժ/պ՝

---------- Ա. Պետրոսյան
/ստորագրություն/

Հավելված 3
« » 2019թ. կնքված
«ՊՎԾ-ՄԱԾՁԲ-19/12 » ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

«Հայաստանի Հանրապետության
փորձագիտական կենտրոն»
ՊՈԱԿ
ք. Երևան, Արշակունյաց պ., 23
Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900018003146
ՀՎՀՀ 02512069

Պատվիրատու

Հայաստանի Հանրապետության պետական
վերահսկողական ծառայություն
ք. Երևան, Մաշտոցի 47
ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 90011021954
ՀՎՀՀ 00183253

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2019թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ պետության կարիքների փորձաքննության ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիր

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » «նոյեմբեր» 2019թ.

Պայմանագրի համարը՝ ՊՎԾ-ՄԱԾՁԲ-19/12

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 2019 թ. դուրս գրված N _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	Փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	Փաստացի		
1								
	Ընդամենը՝							

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____

_____
ազգանուն, անուն

Ծառայությունն ընդունեց

_____

_____
ազգանուն, անուն

Հավելված 3.1
« » 2019թ. կնքված
«ՊՎԾ-ՄԱԾՁԲ-19/12» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ Հայաստանի Հանրապետության պետական վերակսկողական ծառայությունը (այսուհետ՝ Պատվիրատու) և ««Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Կատարող) միջև 2019թ. -ին կնքված N «ՊՎԾ-ՄԱԾՁԲ-19/12» գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 2019թ. -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն